

նալու դիտաւորութեամբ Տրապիզոնի վրայէն
 Պոլիս կու գայ: 1612—1616 գործածները
 քիչ մը վար կը տեսնենք: Դարանաղջի 1622—5
 արդէն Ռոտոսթոյի առաջնորդ էր, յետոյ
 հայրենիք գացած եւ 1627ին հայրենիքէն
 երուսաղէմ մեկնած է. 1628ին դարձեալ Պո-
 լիս, Ղալաթիա էր եւ քիչ ետքը Ռոտոսթոյի
 առաջնորդ եղած էր: Կիրակոս ոմն ի խնդրոյ
 Պետրոս երիցու՝ Կանոնագիրք եւ Պատարագի
 Մեկնիչ մ'ընդօրինակած է, որուն յիշատակա-
 րանը գրած է 1639 Մարտ 22ին, ուր շատ
 գովութեամբ կը յիշէ զԴարանաղջին. «Գրեալ...
 ի քաղաքն Յուստոզ, որ մականունն Թէքիրտաղ
 կոչի, ի դուռն ծովահայեաց սուրբ Յոհանէս
 նորընծայ աւետարանիչ անունն եկեղեցոյս, ի
 հայրապետութեան Էջմիածնայ Տէր Փիլիպպոսին
 եւ տեղոյս առաջնորդութեանն, քաջ հոգատոր
 եւ ջատագով յօրինացն Աստուծոյ, մեծ եւ
 անուանի եւ ամենայն իմաստիւք լի, դարանաղու
 Գրիգոր վարդապետին եւ ընդ հովանեաւ նորին
 սքանչելագործ, սուրբ Թեղթաիին, որ Թումայ
 առաքեալն մասն ի մէջ կայ եւ առ հուպ յինք
 ունի, եւ միւս սքանչելագործ վասոյոյ սուրբ
 Նշանին, որ Թագաւոր կոչի...» (Ֆր. Ն. Ֆինկ,
 Յուլցակ Տիկիսեցի Աբգար Յովհաննիսեանի
 հայերէն ձեռագրերի, Լայպցիգում 1903, էջ
 36, ուր Ֆինկ «յարաբարդի» (վրան կ'աւել-
 ցուի) բառը «յԱրաբարդի» գրած է, եւ անկէ
 «Արաբարդի» անգոյ քաղաք մը հնարած:
 Հմմտ. անդ էջ 221):